



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ ընկերներ,

AEGEE-Yerevan-ը ուրախ է տեղեկացնել, որ հունվարի 28-ին Կոնգրես հյուրանոցի Պիկասո դահլիճում տեղի կունենա մեկօրյա դասընթաց՝ նվիրված Երիտասարդների գործազրկությանը և նրանց զբաղվածության հիմնախղերին: Դասընթացի ընթացքում մասնակիցները կծանոթանան հաջողակ ինքնակենսագրական և ուղեկցող նամակ գրելու հմտություններին, կտվորեն, թե ինչպես նախապատրաստվել գործատուի հետ հարցազրույցին, ինչպես նաև կտեղեկացվեն տարբեր աշխատանքային, կրթական և կամավորական հնարավորությունների մասին:

Դասընթացին մասնակցելու են ներկայացուցիչներ Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնից, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունից (DAAD), Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհրդից (IREX), Erasmus Mundus փոխանակման ծրագրից և այլ կազմակերպություններից:

«Երիտասարդության գործազրկություն» նախագծի շրջանակներում նմանատիպ միջոցառումներ կազմակերպվում են Սոֆիա, Տիրանա, Գոդանսկ, Ստամբուլ, ԵՐԵՎԱՆ, Մոսկվա, Բարսելոնա, Լյուբլին, Թբիլիսի, Սկոպյե, Ռիգա եւ Իզմիր քաղաքներում:

Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է [events@aegeeyerevan.am](mailto:events@aegeeyerevan.am) էլ. փոստի հասցեին ուղարկել ձեր տվյալները, ինչպես նաև ուղեկցող նամակ, որում պետք է նշվի, թե ինչու եք ցանկանում մասնակցել դասընթացին: Դասընթացի օրակարգը և մյուս մանրամասները կուղարկվեն ընտրված մասնակիցներին:

Ուշադրություն՝:

Ծրագրին դիմելու վերջնաժամկետն է՝ **հունվարի 25-ը:**

\* \* \* \* \*

AEGEE (Association des Etats Généraux des Etudiants de l'Europe /Եվրոպական Ուսանողների Ֆորում)-ը միջազգային ուսանողական կազմակերպություն է, որը խթանում է Եվրոպայի երիտասարդության համագործակցությունը, հաղորդակցումը և ինտեգրացիան, աջակցում ժողովրդավարությանը, միջսահմանային համագործակցությանը, շարժունակությանը, Եվրոպական ինտեգրմանը և Եվրոպական ստանդարտներին երիտասարդ եվրոպացիների կրթության մեջ: AEGEE-ն ստեղծվել է 1985 թվականին Փարիզում և հետապնդում է միասնական Եվրոպայի նպատակը: 2010-ից AEGEE երիտասարդական կազմակերպության մասնաճյուղը գործում է նաև Երևանում: AEGEE-Երևանի հիմնադրման նպատակը Հայաստանի դերը եվրոպական երիտասարդության շրջանում ակտիվացնելն է, հայ ուսանողներին եվրոպական ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասին տեղեկացնելն է և նրանց հնարավորություն տալը ծանոթանալ տարբեր մշակույթների հետ, ուսումնասիրել մյուսների լավագույն փորձը և իրենց ստացածը կիրառել Հայաստանում:

**Մանրամասն տեղեկությունների համար կարող եք գրել ծրագրի համակարգող Գայանե Գրիգորյանին [events@aegeeyerevan.am](mailto:events@aegeeyerevan.am) էլ. փոստի հասցեին կամ զանգահարել (093) 95 35 70 հեռախոսահամարին:**

**Հարգանքներով՝**

AEGEE-Yerevan/European Students' Forum

AEGEE-Երևան/ Եվրոպական Ուսանողական Ֆորում  
128 Nalbandyan street, ASUE building, Yerevan, Armenia